

ԱՌԱՆՑ ԳՐԱՎԻ ՍՊԱՌՈՂԱԿԱՆ ՎԱՐԿԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՓԱՏՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿ

Վարկային դիմում-հայտը լրացնելիս պահանջվող փաստաթղթեր

1. Վարկային դիմում-հայտ:
2. Հաճախորդի անձը հաստատող փաստաթուղթ (անձնագիր կամ նույնականացման քարտ) (բնօրինակ):
3. Հաճախորդի հանրային ծառայությունների համարանիշ (ՀԾՀ), բացակայության դեպքում՝ տեղեկանք համապատասխան մարմնից ՀԾՀ չստանալու վերաբերյալ (բնօրինակ կամ կրկնօրինակ):
4. Տեղեկանք Հաճախորդի աշխատավայրից, որտեղ պետք է նշվի վերջինիս զբաղեցրած պաշտոնը և ամսական աշխատավարձի չափը (բնօրինակ):
5. Այն դեպքում, երբ Հաճախորդը չի աշխատում, եկամուտը հաստատող այլ փաստաթղթեր և/կամ եկամուտների վերաբերյալ հայտարարություն (բնօրինակ):
6. Տեղեկանք բնակության վայրից (բնօրինակ կամ կրկնօրինակ):
7. Եթե Հաճախորդի եկամուտները ձևավորվում են ձեռնարկատիրական գործունեությունից՝
 - հիմնադիր փաստաթղթեր՝ պետական ռեգիստրի վկայական, ՀՎՀՀ, կանոնադրություն և այլն (բնօրինակ կամ կրկնօրինակ),
 - տեղեկանք գործունեությունից ստացված եկամուտների վերաբերյալ (բնօրինակ),
 - նախորդ հաշվետու ժամանակաշրջանի ֆինանսական, հարկային հաշվետվություններ (բնօրինակ կամ կրկնօրինակ),
 - այլ փաստաթղթեր Ընկերության պահանջով:

Վարկը հաստատելուց հետո պահանջվող փաստաթղթեր

1. Հաճախորդի ընտանեկան կարգավիճակը հաստատող փաստաթղթեր, ինչպիսիք են՝ ամուսնության վկայական, ամուսնության պայմանագիր, ամուսնալուծության վկայական և այլն (բնօրինակ):
2. Հաճախորդի հետ բնակվող կամ վերջինիս խնամակալության տակ գտնվող անձանց անձը հաստատող փաստաթղթեր կամ ծննդյան վկայականներ (բնօրինակ):
3. Երաշխավոր(ներ)ի անձը հաստատող փաստաթուղթ (անձնագիր կամ նույնականացման քարտ) (բնօրինակ):
4. Երաշխավոր(ներ)ի հանրային ծառայությունների համարանիշ (ՀԾՀ), բացակայության դեպքում՝ տեղեկանք համապատասխան մարմնից ՀԾՀ չստանալու վերաբերյալ (բնօրինակ կամ կրկնօրինակ):
5. Տեղեկանք Երաշխավոր(ներ)ի աշխատավայրից, որտեղ պետք է նշվի վերջինիս զբաղեցրած պաշտոնը և ամսական աշխատավարձի չափը (բնօրինակ):
6. Այն դեպքում, երբ Երաշխավոր(ներ)ը չի աշխատում, եկամուտը հաստատող այլ փաստաթղթեր և/կամ եկամուտների վերաբերյալ հայտարարություն (բնօրինակ):

Ելնելով փարաբնույթ հանգամանքներից կարող են պահանջվել լրացուցիչ փաստաթղթեր և տեղեկատվություն:

Ընկերությունը «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքով սահմանված հաճախորդի պատշաճ ուսումնասիրության նպատակով Ընկերությունը կարող է «Ճանաչիր քո հաճախորդին» («Know your customer») սկզբունքի հիման վրա պահանջել լրացուցիչ փաստաթղթեր կամ այլ տեղեկություններ, ինչպես նաև բանավոր հաղորդակցման ընթացքում լրացուցիչ հարցեր տալ Հաճախորդին: